

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

«ՎԱԳՐԵՆԱՎՈՐ»-Ի ՆԱԽԵՐԳԱՆՔԻ ՏԵՐՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Գ. ԲԱԲՈՒՐՅԱՆ

Հարուստ ու բազմաբովանդակ է Վ. Տերյանի թարգմանական ժառանգությունը: Տերյանագետներն ու գրական առնչությունների պատմությունն ուսումնասիրող գրականագետները հիմնականում արժեքավորել են Տիգրանի մեծ վաստակը հայ թարգմանական գրականության պատմության մեջ, բացահայտելով նրա գրականագիտական-տեսական հայացքները՝ կապված թարգմանական գրականության բնույթի, նրա զարգացման խնդիրների ու հարցերի հետ:

Փնյախ Տերյանի Բարգմանությունների շարքում, այնպես էլ հայ թարգմանական գրականության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում «Վագրենավոր»-ի նախերգանքի 12 տան թարգմանությունը: Այս թարգմանությունը առաջին անգամ ղեկավարել է Ն. Մառը, այնուհետև տերյանագետները, միանգամայն իրավացիորեն, առաջնորդվել են փորձառու գիտնականի տված բարձր արժեքով և չեն անդրադարձել նրա մանրամասն վերլուծությանը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ տերյանագետները, հատկապես պրոֆ. Վ. Պարտիզունին, վեր են հանել բաղամատեսակ փաստեր, տվյալներ, կատարել գրականագիտական ճշտումներ՝ կապված թարգմանության ստեղծման շարժառիթների ու նրա պատմության, բանաստեղծի կենսագրության տվյալ ժամանակահատվածի հետ: Այգուհանդերձ նախերգանքի տերյանական թարգմանության ուսումնասիրությունը, զուտ գրականագիտական-վերլուծական առումով, ցարդ իրագործված չէ: Նմանորինակ աշխատանքը, ինչ խոսք, կպահպարանի Տերյան-թարգմանչի ստեղծագործական սկզբունքները և լույս կսփռի «Վագրենավոր»-ը հայերեն թարգմանելու կարևոր խնդիրների վրա ու կնպաստի այդ ասպարեզում որոշակի ավանդների ստեղծման գործին: Սրանով է պայմանավորված թարգմանության վերլուծության կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Թարգմանության պատմությունը կապվում է բանաստեղծի՝ Պետերբուրգի համալսարանում ուսումնառության շրջանի հետ:

Համալսարանում ուսումնառության տարիներին որոշակի է եղել Տերյանի ցանկությունը՝ տիրապետելու արևելյան լեզուներին, մասնավորապես հին ու նոր վրացերենին և Ն. Մառի նման գիտնականի աջակցությամբ իրագործելու «Վագրենավոր»-ի թարգմանությունը: Տարակուսանք չի ծնում այն հանգամանքը, որ Տերյանը, հավանաբար, նման ստեղծագործական խիզախման հաջողությունը տեսել է Ն. Մառի հետ աշխատակցելու մեջ: Ինչ խոսք, նա այդ հնարավորություններ, և Ն. Մառը կարող էր լրիվ բավարարություն տալ նրան՝ ռուսթավլագիտության յուրաքանչյուր հարցի շուրջը:

Տերյանը վրացերենի քննության ժամանակ լուրջ, հիմնովին գիտելիքներ է ցուցաբերել: Ն. Մառը հետագայում հիացմունք է արտահայտել նրա ընդունակությունների և առանձնապես վրացերենի իմացությունների մասին:

Պահպանվել են Տերյանի կողմից սղագրված դասախոսությունների տետրերը՝ զրված մաքուր, դեղինգիկ ձեռագրով: Իրանք ամբողջական չեն. մի քանիսը թողնում են պատահականների տպավորություն: Տետրերից մեկի վրա ռուսերեն զրված է. «академик Н. Я. Марр, Лекции по грамматике древнегрузинского языка»¹, մեկ ուրիշի վրա՝ «Кипшидзе «Грузинский язык»², նա ոչ միայն հմտացել է հին ու նոր վրացերենի մեջ, այլև լսել է Ի. Ա. Զավախիշվիլու դասախոսությունները³՝ Վրաստանի պատմության մասին:

¹ Հայկական ՍՍՀ ԳԱ գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Տերյանի ֆոնդ, գ. 139:

² Նույն տեղում, գ. 120:

³ Նույն տեղում, գ. 121:

Անկասկած վրացագիտության բնագավառում զգալի հաջողություններն ու գիտելիքների որոշ նուտակումն է պատճառ հանդիսացել, որ Տերյանը իրեն հասու է համարել ձեռնարկելու թարգմանությունը նա գիտակցել է զործի առասպելական դժվարությունը և, ինչպես արխիվային նյութերն են ցույց տալիս, պատրաստվել է բանասերի բարեխղճությամբ:

Նախքան թարգմանական աշխատանքը սկսելը Տերյանը կազմել է իրեն անհրաժեշտ դրականության ցանկը⁴, որտեղ ընդգրկված են ուսումնական գիտության ու վրացագիտության վերաբերյալ ամենանշանավոր աշխատությունները:

Պահպանվել են Տերյանի ձեռագիր բառաբանները՝ «Слова»⁵ վերնագրի տակ, որտեղ արտագրված ու բացատրված են պոեմում հանդիպող անհասկանալի բառերն ու կապակցությունները: Կան նաև առանձին պատառիկներ, որոնք «Վազրենավոր»-ի նախերգանքի ն. Մառի ուսման թանկությունն են⁶, արտագրված Տերյանի ձեռքով:

Տերյանը ծանոթ էր ժամանակի ուսումնական գիտության ընդհանուր մակարդակին և հասու էր խորանալու բանասիրական մանրամասների մեջ: Որինակ, իր կազմած բառարաններից մեկում «Ծղնաղ» բառը բացատրված է հետևյալ կերպ. «Ծղնաղ—коран «Это одно из мест которое Марр хочет использовать для доказательства своей теории о возникновении поэмы в мусульманской среде»⁷.

Արխիվային նյութերում հանդիպում ենք «Վազրենավոր»-ի Ստ. Բաստամյանի հայերեն առաջին թարգմանության մի հատվածի, որը գրված է Տերյանի ձեռագրով, 9 փոքրագիր էջի վրա, մատիտագիր⁸: Անշուշտ, նախօրոք նա ուսումնասիրել է այն և զաղափար կազմել Ստ. Բաստամյանի կատարած աշխատանքի սկզբունքների մասին:

Նմանօրինակ նախապատրաստությունը վկայում է, որ Տերյանը նպատակադրված է եղել թարգմանելու ամբողջ պոեմը: Հայ գրական շրջաններում ևս հայտնի է եղել այդ⁹, Սակայն պոեմի «ոսկե տողերից» (Տերյանի արտահայտությունն է) քանի՞ տուն է նրան հաջողվել հնչեցնել հայերեն: Թարգմանությունը՝ կազմված 12 տնից, առաջին անգամ հրատարակել է Պ. Մակինցյանը «Նորք» հանդեսի 1922 թ. առաջին գրքում: Թարգմանությանը կցված ծանոթագրությունում Պ. Մակինցյանը ճշտել է և՛ թարգմանության տարեթիվը՝ 1914—1917 թթ., և՛ տների քանակը՝ 12: Առաջին տպագրությունից հետո նույնը մտցվել է բանաստեղծի երկերի ժողովածուի երրորդ հատորի մեջ, որը դարձյալ հրատարակել էր Պ. Մակինցյանը: Հետագա բոլոր հրատարակություններում պահպանվել է այդ տեքստը: Միայն Վ. Տերյանի երկերի վերջին հրատարակության մեջ պրոֆ. Վ. Պարտիզունու կողմից ինքնագրի հիման վրա տրված են նաև թարգմանության այլ ընթերցանություններ: Չնայած հարցի այդպիսի հստակությանը, որ թարգմանությունը բաղկացած է 12 տնից, այնուամենայնիվ, որոշ գրականագետներ ոչ ճիշտ տվյալներ են հաղորդում այդ մասին, որը և իրավացիորեն մատնացույց է արել պրոֆ. Վ. Պարտիզունին. «Մի գրականագետ դրում է թե Տերյանը թարգմանել է Ե. Ռուսթավելու «Ընձենավոր»-ի նախերգանքը, մյուսն անցնում է նախերգանքի սահմանները և բանը հասցնում 44 տան, մինչդեռ Տերյանը սկսել և թարգմանել է ընդամենը 12 տուն»¹⁰:

Մի հարց ևս: «Վազրենավոր»-ի ո՞ր հրատարակությունն է Տերյանի թարգմանության համար քննադրի դեր կատարելու ն. Մառը այդ առթիվ գրում է, որ «Տերյանը «Վազրենավոր»-ի նախերգանքի հայերեն թարգմանությունը սկսել է ոչ թե իմ կողմից պոեմի նախերգանքի վերականգնած տեքստից, այլ տրադիցիոն տեքստից»¹¹: Այդ ժամանակ «Վազրենավոր»-ի ամենատարածված հրատարակություններն են՝ Գ. Դ. Քարթվիլաշվիլուն (1888 թ.) և Դ. Կարիճաշվիլուն (1903 թ.): ինչս երկու հրատարակություններում նախերգանքի սկզբի 12 տունը միանման են: Տերյանը, պարզ է, իր թարգմանությունը կատարել է վերոհիշյալ հրատարակություններից մեկն ու մեկը ունենալով ձեռքի տակ:

4 Նույն տեղում, գ. 85գ:

5 Նույն տեղում, գ. 85ե:

6 Նույն տեղում, գ. 85դ:

7 Նույն տեղում, գ. 85ե:

8 Նույն տեղում, գ. 85բ:

9 Տե՛ս Ստ. Զորյան, Հուշերի գիրք, Երևան, 1958, էջ 207: Գ. Լևոնյան, Հուշեր, Սրեվան, 1959, էջ 166—167:

10 Վ. Զ. Պարտիզունի, Գրականության ուժն ու հմայքը, Երևան, 1963, էջ 326:

11 «Նորք», առաջին գիրք, 1922, էջ 124:

Ռուսթաֆէւզիտուիթյան մեջ հատուկ տեղ է հատկացվում «Վադրենավոր»-ի նախերգանքին, ինչի դա պատճառարանված է. քանի որ պոեմի պատմա-բանասիրական հարցերի վճռման և հեղինակի գրական-գեղագիտական հայացքների պարզաբանման տեսակետից արտակարգ նշանակություն ունի նախերգանքը¹⁴։ Այս առումով նախերգանքի թարգմանությունից պարտադիր կերպով առաջին հերթին պահանջվում է անշափ հարազատություն քնադրին, այնպես, որ եթե պատմաբանը, բանասերը թարգմանված նախերգանքի հիման վրա որևէ միտք կառուցելու լինի, տարբերություն չնկատվի քնադրի տվյալների միջև։ «Վադրենավոր»-ի նախերգանքը հանդիսանում է յուրահատուկ րանայի՝ Ռուսթավելու գեղագիտական հայացքների լուսարանության, պոեմում տեղ գտած մոտիվների վեր հանման, պոեզիայի, արվեստի ռուսթավելյան ըմբռնման մեկնաբանման համար։ Նա, ամփոփելով գրականագիտական ու պատմական հույժ հետաքրքիր ու կարևոր փաստեր, միաժամանակ անկրկնելի է ու չքնաղ որպես բանաստեղծական կերտվածք։

«...здесь и по музыкальности, и по сжатости слога и образности мысли мы находим лучшее, что только вышло из под пера Шоты»¹³, գրել է Ն. Մանր նախնորգանքի մասին:

Նշված գիտա-բանասիրական դրույթներով էլ մոտենում ենք «Վազրենավոր»-ի նախերգանքի
տեքստական կամ թարգմանության վերլուծմանն ու զննահատմանը:

Թարգմանությունն ու բնագրի բաղդատման ժամանակ անմիջապես նկատվում է մի անօրինակ հարազատություն, որը մեծ մասամբ հասնում է բառային համազորության: Տեքստեր միայն միտքը չէ փոխադրում հայերեն, նա հայերեն է չնչեցնում բանաստեղծի մտածելակերպը, պատկերների համակարգը, պոետիկայի այն ամբողջությունն ու ինքնատիպությունը, որ հատուկ է Ռուսթավելի քանաստեղծին ու մտածողին: Ասվածը ականառու ցույց տալու համար վերցնենք երրորդ տունը.

ვის ჰმევენის ლომსა ხმარება შუბისა, ფარ შიმფერისა
მეფისა, მზის თამარისა, ლაწვ-ბადახშ-თმა-გიშერისა, —
ძას, არა ეიცო, შევკადრო შესხმა ხოტბისა ხშირისა!
მისთა მკვრეტელთა ჯანდისა მირთმა ჰხამს, მალთ ძშიერისა.

Տողացի թարգմ. (ոկ առյուծին է վայել միայն կրել սուր,
տեգ, վահան: (Նա — առյուծն է) Թամար — յարկ արքայուն, ում
այտերը լալ են, իսկ վարսերը՝ ագաթ: Նա արդյոք կհանդգնեմ
ներդրողել նրան իմ երգով: Նրան որ նայում են (քանի որ նա
այնքան զեղեցիկ ու շքեղ է) ճշմարիտ կերպով (նրանց)
թվում է վայելում են շաքար ու կաթ:

42. Տերյանի թարգմ.

Լոկ առյուծին վայել է սուր, տեղ ու վահան, ահա արթաղ,
Թամար — արև արթայուհի, ում այտն է լալ, ում վարսն ազաթ,
Կհանդզնեմ արդյոք զովել թեղ իմ երգով, արևի հատ,
Ք'եզ, ում նայողն, արդարապես, վայելում է շաքար ու կաթ:

Համեմատությունը բերում է այն եզրակացության, որ ճշմարտացիորեն պահպանված են բոլոր այն գործոնները, որոնք հատուկ են քնազրին: Սակայն երրորդ տողում նկատվում է շեղում. Խաղղմանիչն ափելացրել է «արևի հատ» արտահայտությունը, որը չկա քնազրում: Բոլոր ղեկավարում այդ շեղումը չենք կարող ինքնահնարանք համարել, որովհետև որպես բանաստեղծական արտահայտություն այն երկրորդ տողում գոյություն ունի, հետևաբար օգտագործված է հենց բանաստեղծի պատկերավոր խոսքը: Ընդհանրապես պոեմում Ռուսթավելին բազմիցս իր հերոսներին համեմատում է արևի հետ: Այնպես որ միանգամայն պատճառաբանված է ու արդարացի այդ պատկերի գոյությունը, որը բոլորովին չի աղճատում ինչպես բովանդակությունը, այնպես էլ բանաստեղծական կողմը: Նմանօրինակ ղեկավարի հանդիպում ենք 5-րդ տան երկրորդ տողում:

მიზრძანეს მათდა საქებრად თქმა ლექსებისა ტყბილისა, ჭაბუკისა და წამწამისა, თმათა და ბაგე-კბილისა.

¹² ა. ბარამიძე, შოთა ორბელიანი. თბ., 1958, ტ. 13.

12 Н. Я. Марр, Вступительные и заключительные строфы Витязя в барсовой коже Шоты из Рустава. Грузинский текст, русский перевод и пояснения с этюдом «Культ женщины и рыцарство в поэме», Т. Р., XII, Санктпетербург, 1910, 4, V.

Տողացի թարգմ. նա պատվիրել է ինձ գովեմ իրեն քաղցրահնչուն
երգով, գովեմ նրա հոնքերն ու թարթիչները, մապերը,
շրթունքներն ու ատամները:

Վ. Տերյանի թարգմ.

Պատվիրեց, որ գովեմ իրան երգով անուշ ու ոլորուն
իր հոնքն աղեղ, թարթիչը նետ, սաթ-վարսն ու լալն իր շուրթերում:

Բնագրում «հոնքը», «թարթիչը», «մաղը» մակդիրներ չունեն, իսկ թարգմանությունում ստացել են «աղեղ», «նետ», «սաթ» բնորոշումները: Այդ բոլորով հանդերձ չի կարելի այն բնագրից հեռացում համարել, որովհետև Ռուսթավելին թարթիչի, հոնքի, մաղի համար պոեմի այլ մասերում հաճախ օգտագործում է նշված մակդիրները: Այսպիսով Տերյանի համար ելման կետը բանաստեղծի պատկերների համակարգն է եղել, նրա ոճի համահավասարության պահպանումը թեկուզ շեղման դեպքում իսկ: Այդ պատճառով թարգմանությունը չի տուժել, ընդհակառակը, դարձել է ստեղծագործ-թարգմանական աշխատանքի նմուշ:

Տերյանի բարձրարժեք կատարումը առավել ակներախ է դառնում, երբ այն համեմատում ենք Գ. Ասատուրի թարգմանության հետ:

Կ. Ասատուրի թարգմ.

Ո՞ր առյուծին է սազական գործածել տեգ, վահան, սուսեր,
Արև Թամար-արքայուհուն, ում այտն է լալ, վարսը՝ գիշեր:
Կհանդղենե՞մ արդյոք հյուսել ներբողական նրա համար,
Որին նայողն է վայելում մեղրը ծորուն, եղեգշաքար:

Գ. Ասատուրի մոտ առկա են տարրեր տիպի շեղումների: Առաջինը, «ՅՈՍ» բառը հարցականով չպետք է թարգմանվի, այլ նրա գործածության երկրորդ ձևով՝ «միայն», «լուկ»¹⁴. երկրորդը, բնագրում բացակայում է «մեղր-ծորուն» արտահայտությունը և դրա փոխարեն պետք է լինի «կաթ» բառը (ինչպես Վ. Տերյանի մոտ է). երրորդը, նկատվում է ոճի անհարթություն, օրինակ, «սազական» բառը ոչ մի կերպ չի կապվում «այտ», «վարս», «հանդղեն», «հյուսեր», «ներբողական», «վայելել» բառերի հետ, քանի որ բարբառային է, իսկ թվարկածները միանգամայն զրահան են և գործածված են պաթետիկ խոսքի նպատակով:

Այժմ քննարկենք 7-րդ տունը, որտեղ Ռուսթավելին խոսում է Տարիելի ու իր մասին: Ավելորդ է նշել ռուսիականացիության համար այս տան կարևորությունը, նույնը վերաբերում է նաև թարգմանությանը:

ՅՈՒ. ԴԱՅԵՍԵԴԵՏ ԵՐԱՅԵԼԻՍԵՅԻՍ ԵՐԱՅԵԼԻՍ ԴԱՅԵԼԻՍ ՄԵՄԵՐՈԾԻԼԻ
ՄԻՆԵԾԵՐԻ ՄԱՐՏ ԴԱԾԱԴԵԾԻՏ ՎԻՆԵՐԱ ԿՐԵՄԼԻՆ ՄՈԾԻԼԻ!
ԴԱՅԵՋԵ, ԴՆԵՏԵՎԵԼՄԱՆ ԳԱՎԵԼԵՅԵ, ՄԻՏԵՅԻՍ ԳՆԼ-ԼԱՆԵՎԱ-ՍՈԾԻԼԻ,
ԱՉԱՄԵԼԻՍ ԱՄԾԱԴ ՆԱԵՉԵՅԻՍ, ԱՄԻ ԵՐԱՅԵԼԻՍԻ ՄԵՄԵՐՈԾԻԼԻ:

Տողացի թարգմ. եկեք նստենք, ո՞ւմ որ տրված է ծնեղյան օրից Տարիելի
բախտը և ո՞վ որ անսպառ արցունք է թափում նրա համար:
Նա էլ նստեմ Ռուսթավելիս (նույնպես)
սիրտս խոցված տեղով (նրա չարչարանքների համար) և պետք
է շարադրեմ չափածո (զրույց նրա մասին): Այն, ինչ մինչև
այժմ (հասարակ) պատմություն էր, սրանից հետո (կդառնա)
մարգարտի շար:

Վ. Տերյանի թարգմ.

Ում աչքերը չեն ցամաքում լալով ցավից դառն ու անճար,
եկեք, ում որ բախտ է ընկել Տարիելի բախտը դժվար,
Կընստեմ հեզ Ռուսթավելիս, կերգեմ խոցված ես չարաչար
եվ ինչ-որ ցարդ զրույց էր պարզ, պիտի դառնա մարգարտի շար:

¹⁴ Այդ մասին տե՛ս նաև՝ Ս. Ավչյան, «Վազրենավորն» ու Վահան Տերյանը, «Սովետական վրաստան», 1965, № 110:

Անկրկնելի է թարգմանված: Իսկ ինչպե՞ս է հնարույր դարձնում մի հատիկ «ցարդ» բառը և մեզ տանում դեպի հեռավոր անցյալը: Բացառություն չէ նշված օրինակը: Տերյանը նաև այլ տողերում («սա է կարգում երկրում արքա ի պատկեր յուր և յուր հանգույն», «լէր օգնական») ռեալիստիկ է գրարարյան այնպիսի բառաձևեր, որոնք ժամանակակից հայոց լեզվում այս կամ այն չափով կիրառվում են, որպեսզի հայ ընթերցողի համար պարզորոշ դարձնի պոեմի դարաշրջանային տարրերակումը:

Տերյանագիտության մեջ թարգմանության հարցի կապակցությամբ նշվել է այն հանգամանքը, որ Տերյանը վերջին երկու տունը «թերի է համարել», այսինքն՝ մտադիր է եղել հրապարակ հանել վերջնականապես այն ուղղելուց հետո: Բանաստեղծի արխիվում պահպանվել են այդ տներին թարգմանության տարրերակները, որոնց ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում, որ անգամ «սևագիր» կոչված հատվածում փայլում է Տերյան-թարգմանչի տաղանդը:

Բերենք 11-րդ տան բնագիրը, տողացի թարգմանությունը և թարգմանությունը:

ձմա սալմեսա մոջնդրնոն Եղ շնմոն մոջնդրնոն:

ձմեռն ցրտի շնձը, եղալը սեղա ստմոծոցն ճաչրոնա տմոծա:

յեղ մղյուհա ծղձոտնա խճացն ջաղտա, ցմալցոլոծա:

յարդո մոջնդրնոն ոցոն, ցոն ոլմն սոցլոնա տմոծա:

«Սիրահարներ, դուք սեր չպետք է անվանեք այն, երբ (մեկը) հեշտ է տանում տանջալից բաժանումը, երբ այսօր նրան պետք է մեկը, իսկ վաղը ուրիշը: Այդ հիշեցնում է երիտասարդների դատարակ խաղերը, (այդ) սղայություն է՝ ճշմարիտ սիրահարը նա է, ով զսպում է երկրային, ըղձերը:

Ով սիրում է այսօր մեկին, վաղն ուզում է սիրել նոր յար,

Ով չի մաշվում յարից բաժան, չասեք նրան դուք սիրահար,

Սակություն է, տղայություն, սերը խաղ է նրա համար,

Իսկը նա է, ով զսպում է իր երկրային ըղձերը վառ:

Այստեղ սևագրության հետք անգամ նկատելի չէ, գործ ունենք միանգամայն լիարյուն թարգմանության հետ: Սակայն պետք է նշել, որ Տերյանի մոտ կա մի վրիպակ՝ վերջին տողում պահանջվելիք «երկրային ըղձեր» արտահայտությունը դարձել է «երկնային ըղձեր»¹⁵, հակասություն ստեղծելով տան բովանդակության մեջ: Սխալը ուղղված է պրոֆ. Վ. Պարտիզունու կողմից՝ բանաստեղծի երկերի վերջին հրատարակությունում¹⁶:

Տերյանը թարգմանությունում առավելագույն չափով հաղորդել է ճշմարիտ սիրո ուսթավելյան բմրոնումը, մազաչափ անգամ շնորհվելով բնագրի պատկերային, իմաստային, ինտոնացիոն դինամիզմից: Նախնադրանքում Ռուսթավելին ընդհանուր կարգով ուրվագծում է իր պատկերացումը իսկական սիրո մասին, որ հետագայում պոեմում ծավալում ու խորացնում է կոնկրետ դեմքերի ու դեպքերի շրջապատությունում: Սրանով էլ մեծ կարևորություն է ստանում նշված տան թարգմանությունը: Ասվածը որոշակի դարձնելու համար վերցնենք Գ. Ասատուրի թարգմանությունը:

Սիրահարներ, սեր մի կարծեք, երբ որ ուզեք այսօր մեկին,

Վաղն ուրիշին, ապա թողնեք առանց խղճի խայթի՝ կրկին,

Այսպես ըստոր, անարգ խաղի պատանեկին է լուկ հարմար,

Իսկ սիրահարը նա է, ով զսպում է իր կրքերը վառ:

Թարգմանության մեջ բերված «առանց խղճի խայթի՝ կրկին» արտահայտությունը թեկուզ և հաղորդում է իմաստը, բայց բոլորովին չի կապվում Ռուսթավելու մտածելակերպին և ավելի շուտ մեր օրերի մտածողության արգասիք է: Իսկ առաջին տողում հանդիպող «երբ որ ուզեք այսօր մեկին» դարձվածքից անկենդան կենցաղի ու գորշ առօրյայի շունչ է փչում, որի պոետիկ լինելու մասին խոսք լինել չի կարող: Ընդհակառակը, Տերյանի մոտ շնչոված է սիրելու մոմենտը. «վաղն ուզում է սիրել նոր յար», որը առավել բանաստեղծական է ու ճշմարիտ: Տերյանի մոտ ընդգծված է նաև բաժանման և դրա հետ կապված տվյալների պահը. «Ով չի մաշվում յարից բաժան», Մի կարևոր հանգամանք, որովհետև Ռուսթավելու հերոսների՝ Տարիելի և Նեստան-Դարեջանի, Ավթանդիլի և Թինաթինի համար բաժանումը ոչ թե փորձանք, այլ զգացմունքների փորձառության միջոց է, սիրո մեջ է՝ լավելի հաստատուն կանգնելու պատվանդան: Ռուսթավելին նախնադրանքում

15 Տե՛ս ԳԱԹ, Տերյանի ֆոնդ, գ. 85գ:

16 Տե՛ս Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1963, էջ 30:

ակնարկում է ճշմարիտ սիրո մեջ բաժանման նշանակությունը, որը պոետի չափազանց կոնկրետ գծեր է ստանում: Թարգմանությունում արդարացված չէ այդ արտահայտության բացթողումը:

Երրորդ տողը Տերյանի հաղորդել է գեղարվեստական շնչով, իսկ Գ. Ասատուրի մոտ ռեստոր, «անարգ» բառերը տվյալ բառակապակցությունում ոչ մի մթնոլորտ չեն ստեղծում բանաստեղծականի համար և առկա չեն բնագրում: Նույն տողում «ձգձգ ջաշտա ցմաֆցլոծանա» արտահայտության դիմաց Տերյանը ստեղծել է նրան համադրող՝ «խակություն է, տղայություն» և հասել շտեպսված բառային, պատկերային համապատասխանության:

Վերջին տունը իմաստային, ոճական տեսակետից ներդաշնակ է ամբողջ թարգմանությանը: Ի՞նչ, ինչպես նշեցինք, Տերյանին դեռևս չի բավարարել նմուշի համար վերցնենք առաջին տողի բնագիրը, տողացի թարգմանությունը, Վ. Տերյանի և Գ. Ասատուրի թարգմանությունները:

ահն թողնվող միջնորոծա առ ճաշտա ցմաֆցլոծանա:

«Առաջին (բարձրագույն, ճշմարիտ) սերը թաքցնում է տանջանքն իր մեջ»:

Վ. Տերյանի թարգմ.

Ճշմարիտ սերն իր վիշտը սիշտ թաղում է խոր, պահում թաքուն:

Գ. Ասատուրի թարգմ.

Անկեղծ սիրով ցույց չեն անում, տառապանքը չի մերկանում:

Տերյանի թարգմանությունում առավել նկատելի է բնագրային հարազատությունը, իսկ Գ. Ասատուրը փոփոխել է միտքը և այն էլ ոճական տեսակետից անփութությամբ սխալով: «Ցույց չեն անում» արտահայտությունը, «սեքրումով» լինելով, որպես գիտակցված հասկացություն բնույթի չէ ռուսափելյան դարաշրջանի համար: Տվյալ դեպքում խախտված է պատմական մտածողությունը:

Հարկ չկա անդրադառնալու թարգմանության մյուս տեսիլի վերլուծությանն ու բաղդատմանը, քանի որ Տերյանը կիրառել է ստեղծագործական-թարգմանական նույն սկզբունքները՝ ստեղծելով օբյեկտի աստիճանի բարձրացված մի թարգմանություն:

«Վազրենավոր»-ը էպիկական բնույթի բանաստեղծական խոշոր կերտվածք է, որը, բնականաբար, ունի իր տաղաչափական յուրօրինակ համակարգը: Հայերեն թարգմանությունում այդ համակարգի՝ մետրական չափի, բանաստեղծական խոսքի դարգացման, հանգի, բառերի, հնչյունական կողմի հնարավոր փոխանցման միջոցների լուծման ձևից ու եղանակից է կախված երկի ոճական, ինտոնացիոն հնչեղությունը:

Տերյանի թարգմանության հաջողությունը պայմանավորված է թարգմանչի՝ վերահիշյալ խրեոլիներին միանգամայն ճիշտ մոտեցմամբ: Այդ մասին ինքը՝ թարգմանիչը իր նամակներից մեկում տեղեկացնում է. «Թարգմանում եմ Շոթա Ռուսթավելիի «Ընձենավոր»-ի նախերգանքը... (վրացերենից եմ թարգմանում, իհարկե և պահպանում եմ ձևն ու չափը): Վերջինը ուզում եմ նախ մտնել ցույց տալ, հետո հղկիմ ու ղրկեմ»¹⁷ (ընդգծումները բնագրին են — Մ. Բ.):

Ռուսթավելին օգտագործել է 16 վանկանի տող, որը վրացական տաղաչափությունում հայտնի է «շաիրի» անվամբ, ունի երկու ձև՝ ցածր և բարձր: Ցածր շաիրին քորեյ — դաքտիլային երկանդամ ոտքն է, իսկ բարձրը՝ քորեյրական երկրորդ պետեր:

Տերյանը օգտագործել է յամբական-քառանդամ 16 վանկանի տողը որպես «շաիրի» համարժեք չափ¹⁸, Տերյանի մոտ այս շաիր հնարավորություն է բնօրինակ հասնելու պոետի ինտոնացիոն հնչեղության՝ բանաստեղծական հույզի ու զգայական կողմի պահպանման: Թարգմանության արժանիքներից մեկը պետք է համարել և այն, որ արտաքին տեսակետից իսկ, ռուսափելյան հանգրվանի կորցրել իր տեսքը:

Վ. Տերյանի թարգմանել է նախերգանքի 12 տունը, վաղահաս մահի կասեցրել է այդ աղգանվեր գործի իրադրությունը: Սակայն Տերյանի «Վազրենավոր»-ի հայերեն թարգմանության տրագիկա է ստեղծել, նշել ճանապարհ:

¹⁷ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1963, էջ 448:

¹⁸ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Մ. Բարություն, «Վազրենավորի» հայերեն թարգմանությունների տաղաչափության մի քանի հարցեր, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Հրաբեր հասարակական գիտությունների. Զ, 1966, էջ 70—76: